

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

## ԴՈԿՏՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՆՔՈՎ

### ԱՏՈՄ ՄԻԻԹԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դեկան,  
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու,  
մանկավարժության դոցենտ  
*atom.mkhitaryan@isec.am*

DOI: 10.54503/978-9939-481-23-4-146

### Համառոտագիր

Համալսարանում ավանդական կրթությունը կազմակերպելիս արդյունքները չափվում են ակադեմիական կրեդիտների կուտակումով՝ կիրառելով քննություններ և ստուգարքներ: Ունակությունների հենքով կրթության արդյունքների չափման հիմքում դրվում է նախանշված նշաձողերի հաղթահարումը: Այն առավել բարդանում է դոկտորական կրթության (բարձրագույն կրթության 3-րդ մակարդակ) կազմակերպման դեպքում, որն ունի հզոր հետազոտական բաղադրիչ:

Ունակությունների հենքով կրթության կազմակերպումը ենթադրում է ոչ միայն ուսանողակենտրոն ուսումնառություն, այլև աշխատաշուկայի փոփոխվող պահանջմունքների հասցեական թիրախավորում: Կարևոր է դոկտորական կրթական ծրագրի կառավարման նպատակների հստակեցումը, որը պիտի կատարվի երեք հարթությունում. առարկայական ծրագրեր, ուսումնառության վերջնարդյունքներ և շուկայի պահանջարկ:

Բարձրագույն կրթության երրորդ մակարդակի շրջանավարտի մասնագիտական կարողությունները նրան չեն տրվում ի վերուստ, այլ ձևավորվում են աստիճանաբար: Ուսումնառության և հետազոտությունների ընթացքում մասնագիտական կոնկրետ կարողությունները գումարվում են և միմյանց փոխլրացնելով դառնում շրջանավարտ դոկտորի մրցունակ կարողությունների համակցություն:

Միաժամանակ նշենք, որ կարողությունները գոյանում են առարկայական ծրագրերից և հետազոտական աշխատանքներից բխող մասնագիտական գիտելիքներից և հմտություններից: Դոկտորական կրթական ծրագրի արդյունավետ կառավարման համար հարկավոր է մշտադիտարկման ենթարկել կարողությունների ձևավորման ողջ շղթան՝ ներառյալ մասնագիտական ու այլ ծրագրերը, անհատական և համատեղ հետազոտական աշխատանքները:

Աշխատանքում փորձնականորեն ցույց է տրվում, որ ունակությունների հենքով կրթության կազմակերպման պարագայում կրթության նպատակադրումների ծանրության կենտրոնը բազմակողմանի զարգացած և մասնագիտական գիտելիքներով հարուստ շրջանավարտի պատրաստումից տեղափոխվում է դեպի մասնագիտական մրցունակ կարողություններով և հմտություններով շրջանավարտի պատրաստում:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ դոկտորական կրթություն, ունակությունների հենքով ուսումնառություն:

# COMPETENCY-BASED ORGANISATION OF DOCTORAL EDUCATION

ATOM MKHITARYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia  
International Scientific-Educational Centre  
Dean, PhD in Physical-Mathematical Sciences, Associate Professor  
*atom.mkhitaryan@isec.am*

## Abstract

In the organisation of traditional university education, results are measured by the accumulation of academic credits through exams and tests. Measuring educational results by abilities is based on overcoming the specified milestones. The situation is complicated in the case of organising doctoral studies (3rd level of higher education), which has a strong research component.

Organisation of education based on competencies implies not only student-oriented training, but also a targeted orientation to the changing needs of the labour market. It is important to specify the goals of the management of the doctoral educational program, which should be carried out in three dimensions: curricula, learning outcomes and market demand. At the same time, competencies are developed through professional knowledge and skills acquired in the doctoral student's study programs and research work of the doctoral student. Effective management of the doctoral program requires monitoring the entire chain of formation of the graduate's potential formation, including professional and other programs, as well as individual and joint research work.

The work experimentally shows that in the case of organising education based on competencies, the centre of gravity of educational goals is shifting from the preparation of a graduate with multifaceted development and rich professional knowledge to the preparation of a graduate with professional, competitive competencies and skills.

**Keywords and phrases:** Doctoral education, competency-based learning.

# ОРГАНИЗАЦИЯ ДОКТОРСКОГО ОБРАЗОВАНИЯ НА ОСНОВЕ ВОЗМОЖНОСТЕЙ

## АТОМ МХИТАРЯН

Декан Международного научно-образовательного центра  
Национальной академии наук Республики Армения,  
кандидат физико-математических наук, доцент педагогики  
*atom.mkhitaryan@isec.am*

### Аннотация

При организации традиционного образования в университете результаты измеряются накоплением академических кредитов с помощью экзаменов и зачетов. Измерение результатов образования по способностям основано на преодолении указанных рубежей. Ситуация усложняется в случае организации докторантуры (3-й уровень высшего образования), имеющей сильную исследовательскую составляющую.

Организация образования на основе способностей предполагает не только обучение, ориентированное на студентов, но и целенаправленную ориентацию на меняющиеся потребности рынка труда. Важно конкретизировать цели управления образовательной программой докторантуры, что должно осуществляться в трех измерениях: учебные программы, результаты обучения и рыночный спрос. В то же время способности формируются на основе профессиональных знаний и умений, полученных в рамках предметных программ и научно-исследовательской работы докторанта. Эффективное управление программой докторантуры требует мониторинга всей цепочки формирования потенциала выпускника, включая профессиональные и иные программы, индивидуальные и совместные исследовательские работы.

В работе экспериментально показано, что в случае организации образования на основе способностей центр тяжести образовательных целей уже смещается от подготовки выпускника докторантуры с многогранным развитием и богатыми профессиональными знаниями к подготовке выпускника с профессиональными конкурентоспособными способностями и навыками.

**Ключевые слова и фразы:** докторантура, обучение на основе способностей.

### Ներածություն

Կրթության արդի մրցակցային համակարգը պահանջում է ունակությունների հենքով մասնագետների պատրաստում, որը հիմնականում իրականացվում է համալսարաններում, իսկ բարձրագույն կրթության երրորդ մակարդակը՝ նաև գիտական կազմակերպություններում: Ունակությունների հենքով բարձրագույն մասնագիտական կրթության կազմակերպումը կատարվում է մի քանի քայլով [1, 2]: **Նախ**՝ որոշվում է, թե ուսանողը ինչ ունակություններ է ձեռք բերելու կրթության ավարտին, և ըստ այդմ՝ կազմվում է ուսումնառության պլան: Այս նպատակով համախմբվում են բոլոր շահառուների ջանքերը՝ նպատակ ունենալով թիրախավորել «գիտելիք + հմտություն + կարողություն» բաղադրիչները՝ կոնկրետ մասնագիտական ունակությունների

ձեռքբերման մասով: Ակադեմիական ծրագիրը կառուցվում է միտված ոչ թե սովորողի մասնագիտական իմացությանը, այլ վերջինիս ունակությունների ձեռքբերմանը [3]: Այստեղ չափազանց կարևորվում է գործատուների ակտիվ մասնակցությունն ուսումնական պլանների ձևավորմանը, որը հիմնականում չի իրականացվում ավանդական կրթության ժամանակ:

**Երկրորդ քայլով**, երբ արդեն կանխորոշված է լինում ունակությունների ձեռքբերման ուսումնառության պլանը, կազմակերպվում է ուսումնական գործընթաց, որը ավանդական կրթությունից տարբերվում է նրանով, որ դրանում չափազանց ակտիվանում են գործնական աշխատանքները, վարժանքները, առաջացած խնդիրների կիրառական լուծումները: Այսինքն՝ կիրառվում է «շրջված լսարան» դասավանդման մոտեցումը, որտեղ, տեսական դասերից զատ, առավել կարևորվում է ուսանողի ստեղծարար մտքի զարգացումը, իրավիճակային դեպքերից բխող խնդիրների գործնական լուծումների ջանքերի գործադրումը, որին կարող են մասնակից դառնալ սովորողների խմբեր, անգամ՝ գործատուներ: Ի դեպ, ուսանողի գործողությունները, որպես կանոն, չեն նորմավորվում ֆիքսված ժամանակահատվածով, ինչպես ավանդական կրթության կազմակերպման ժամանակ է: Եթե սովորողին հաջողվում է արագ հաղթահարել իր առջև դրված ունակությունների ձեռքբերման պահանջի նշաձողը, ապա նա կարող է անցնել ուսումնառության հաջորդ փուլերին և կրթությունն ավարտել ավելի կարճ ժամկետում:

**Երրորդ քայլով** կազմակերպվում է կրթության արդյունքների չափում և գնահատում: Եթե ավանդական ձևով կրթությունը կազմակերպելիս արդյունքները չափվում են ակադեմիական կրեդիտների կուտակումով՝ կիրառելով քննություններ և ստուգարքներ, ապա ունակությունների հենքով կրթությունը կազմակերպելիս ուսումնառության արդյունքների չափման հիմքում դրվում է նախանշված ունակությունների նշաձողերի հաղթահարումը: Այստեղ, որպես կանոն, չեն նշանակվում գնահատականներ, այլ ընդամենը արձանագրվում է, թե արդյոք ուսանողը հաղթահարել է նպատակային այն նշաձողը, որը սահմանված էր կոնկրետ ունակության ձեռքբերման համար [4]:

#### **Կրթության կազմակերպման եղանակները:**

Ունակությունների հենքով դոկտորական կրթության կազմակերպումը էապես տարբերվում է բոլորին հայտնի ավանդական եղանակից: Փորձենք ակնառու կերպով ներկայացնել ավանդական և ունակությունների հենքով կրթության կազմակերպման համեմատական բնութագիրը [5]:

## Աղյուսակ 1.

Ավանդական կրթության և ունակությունների հիմքով կրթության համեմատություն

Բաղադրիչներ	Ավանդական կրթություն	Ունակությունների հենքով կրթություն
Ակադեմիական ծրագրի կառուցում	Դասախոսների կողմից տեսական դասընթացի ձևավորում՝ միտված սովորողի մասնագիտական իմացությանը	Կրթության բոլոր շահառուների ջանքերի համախմբում «գիտելիք + հմտություն + կարողություն» բաղադրիչների համակցմանը՝ միտված կոնկրետ ունակությունների ձեռքբերմանը
Կրթության մատուցում	Դասախոսություն, քննարկումներ, լաբորատոր և գործնական աշխատանք՝ կրթության տարիների ֆիքսված ժամանակահատվածում	Դասախոսություն, քննարկումներ, վարժանքներ, ծրագրեր, գործնական աշխատանք՝ ժամանակային ոչ խիստ սահմանափակմամբ և կրթության տարիների չֆիքսված տևողությամբ
Ուսումնառության գնահատում	Քննություններ և ստուգաբանքներ՝ միտված գիտելիքների և հմտությունների գնահատմանը	Ծրագրով նախանշված կոնկրետ ունակությունների չափումներ՝ համակցելով մշտադիտարկման բազմաքանակ եղանակներ
Արդյունքների չափում	Ակադեմիական կրեդիտների կուտակում	Ձեռք բերվող ունակությունների համախմբում և ամփոփում
Ուսումնառության մշակույթ	Ուսանողները սովորում են հոսքերով՝ լինի այն համալսարան այցելելով, թե առցանց՝ միտված դասախոսակենտրոն ուսուցմանը	Ուսումնառության ճկուն համակարգ՝ համակցված խմբային և անհատական աշխատանքով՝ միտված ուսանողակենտրոն ուսուցմանը
Վերջնարդյունքների ձևակերպումներ	Ուսումնական պլանով նախատեսված առարկայական ծրագրերից վերջնարդյունքների ձեռքբերում	Նախանշված կոնկրետ մասնագիտական ունակությունների ձեռքբերում
Ուսումնառության արդյունքային ներկայացում	Ուսանողին ներկայացվում է ուսումնական պլան և տեղեկացվում, թե ի՞նչ առարկաներ է անցնելու և որքան կրեդիտներ է կուտակելու	Ուսանողը մասնակից է դառնում մասնագիտական ունակությունների ձեռքբերման ճարտարապետությանը և կրթության տարիներին հետևում է, թե ինչպես են այդ ունակությունները իրեն վերագրվում

Այսպիսով՝ ուսումնառության արդյունքի ներկայացումը էապես տարբերվում է ավանդական և ունակությունների հենքով կրթության կազմակերպման ժամանակ: Եթե առաջին դեպքում ուսանողին ներկայացվում է ուսումնական պլան և տեղեկացվում, թե ինչ առարկաներ է անցնելու և արդյունքում որքան կրեդիտներ է վաստակելու, ապա երկրորդ դեպքում ապագա շրջանավարտը մասնակից է դառնում մասնագիտական ունակությունների ձեռքբերման ճարտարապետությանը և կրթության տարիներին հենց ինքն է հետևում, թե ինչպես և ինչ աստիճանով են այդ ունակությունները իրեն վերագրվում:

Ունակությունների հենքով կրթության կազմակերպումը բերում է մի նոր մշակույթ, որը ոչ միայն ենթադրում է ուսանողակենտրոն ուսումնառություն, այլև աշխատաշուկայի պահանջումների հասցեական թիրախավորում: Այստեղ կրթության նպատակադրումների ծանրության կենտրոնը բազմակողմանի զարգացած և մասնագիտական գիտելիքներով հարուստ շրջանավարտի պատրաստումից տեղափոխվում է դեպի մասնագիտական մրցունակ կարողություններով և հմտություններով շրջանավարտի պատրաստում:

## Վերջնարդյունքներ և փոխանցելի հմտություններ

Հարկ է ընդգծել, որ բարձրագույն կրթության տարբեր մակարդակներում վերջնարդյունքների գիտելիք-կարողություն-հմտություն բաշխումն էապես տարբերվում է: Եթե բակալավրիատում և մագիստրատուրայում գիտելիքի ու կարողությունների չափաբաժինները գերազանցում են հմտություններին, ապա դոկտորանտուրայում հակառակն է **[6]**:

### Աղյուսակ 2.

Ուսումնառության վերջնարդյունքները՝ ըստ բարձրագույն կրթության մակարդակների

Կրթական մակարդակ	Ուսումնառության վերջնարդյունքները տոկոսներով		
	մասնագիտական գիտելիք	մասնագիտական կարողություններ	փոխանցելի հմտություններ
Բակալավրիատ	40	50	10
Մագիստրատուրա	30	40	30
Դոկտորանտուրա	10	20	70

Եթե բակալավրիատում գնահատման առաջնահերթությունը տրվում է մասնագիտական կարողությանը (փոխանցելի հմտություններին՝ ընդամենը 10%), ապա մագիստրատուրայում գնահատումը գրեթե հավասարաչափ է բաշխվում «գիտելիք-կարողություն-հմտություն» շղթայում: Իսկ դոկտորանտուրայում առավելապես արժևորվում են փոխանցելի հմտությունները (70%):

### Աղյուսակ 3.

Դոկտորական կրթության ընթացքում ձեռք բերվող փոխանցելի հմտությունները

Ընդհանրական/ փոխանցելի հմտություններ	Նկարագիր
Խմբային հաղորդակցում	մասնակցել բազմաբնույթ քննարկումների, վերլուծել առկա խնդիրները, գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ հնարավորությունները
Մասնագիտական էթիկայի ապահովում	պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը և բարձր պահել բարձրագույն կրթությամբ մասնագետի համբավը
Անձնային ստեղծարարություն	ստեղծագործաբար կիրառել ունեցած գիտելիքները և կուտակելու նորերը
Ինքնակազմակերպում	արդյունավետ կերպով պլանավորել ժամանակն ու կառավարելու սեփական ռեսուրսները
Կարիերայի աճի ապահովում	բացահայտել մասնագիտական կարողությունների աճի անձնային ռեզերվներն ու պլանավորել դրանց իրացման հնարավորությունները
Ինքնադրսևորում	անարգել և անկաշկանդ իրացնել մասնագիտական հմտություններն ու կարողությունները անգամ սթրեսային վիճակում

Այսպիսով՝ մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքների

գնահատման պարագայում անհրաժեշտ է ցուցաբերել տարբերակված բաշխում «գիտելիք-կարողություն-փոխանցելի հմտություններ» ակադեմիական շղթայում: Բակալավրիատում, օրինակ, առավելապես կարևորվում է մասնագիտական գիտելիքների գեներացումը, մինչդեռ դոկտորանտուրայում նպատակահարմար է կիրառել կառավարման հակառակ մոտեցումը՝ առավելապես ուշադրություն դարձնելով փոխանցելի հմտությունների ձեռքբերման գնահատման գործընթացին: Այսպիսի փոփոխություններ կատարվեցին ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրայում 2020–2022թթ., որը էապես բարձրացրեց հետազոտության հետ ինտեգրված կրթության արդյունավետությունը: Դա հաստատում են ԳԱԱ ասպիրանտները, որոնց հետ հարցազրույցների ու հարցումների արդյունքները ներկայացված են մեր համահեղինակած հոդվածում [7]:

Դոկտորական կրթությունը, կապված հասարակության սոցիալ-տնտեսական կտրուկ առաջընթացի և աշխատաշուկայի պահանջների զարգացումների հետ, անընդհատ փոփոխվում է: Դա ենթադրում է կրթական ծառայությունների որակի ապահովման հայեցակարգային մոտեցումների անընդհատ վերանայում: Եթե ոչ վաղ անցյալում ավանդաբար կարևորվում էր կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության դաստիարակությունը, ապա ներկայումս դոկտորական կրթության շրջանավարտի որակական բնութագրիչները թիրախավորված են գործատուի պահանջմունքներին և աշխատաշուկային: Հենց այս առումով էլ ներկայումս բարձրագույն կրթության համակարգը բախվում է դոկտորական կրթական ծրագրերի արդյունավետ կառավարման գործառնությունների հիմնախնդիրներին, որոնք իրենց հրատապ լուծումներն են պահանջում: Մխեմատիկորեն ներկայացնենք այն:

Դոկտորական կրթական ծրագրի կառավարման նպատակադրում.  
մասնագիտությամբ աշխատանքի տեղավորման արագություն

Շրջանավարտի նկատմամբ աշխատաշուկայի (այդ թվում գիտական կազմակերպություններ) պահանջներ

A1 B2 C3 D4 E5  
դոկտորական կրթական ծրագրով ուսումնառության վերջնարդյունքներ

$a_1, a_2, \dots, a_n$   $b_1, b_2, \dots, b_n$   $c_1, c_2, \dots, c_n$   $d_1, d_2, \dots, d_n$   $e_1, e_2, \dots, e_n$  առարկայական ծրագրերով և հետազոտական նախագծերով նախատեսվող ուսումնառության վերջնարդյունքներ

**Գծապատկեր 1.** Կրթական վերջնարդյունքներով դոկտորական կրթական ծրագրի ձևավորման ճանապարհային քարտեզը

Բնականաբար, բուհերը և գիտական կազմակերպությունները, ձգտելով շրջանավարտների աշխատանքի տեղավորման բարձր ցուցանիշների, փորձում են ուղղակի ներգործություն ունենալ կրթության կազմակերպման գործընթացի վրա: Կրթությունից դեպի գիտություն և դեպի գիտահենք աշխատաշուկա անցումն առավել արդյունավետ է համարվում, երբ գործում է շուկայական առաջարկի ու պահանջարկի բնականոն օրենքը, և շրջանավարտները աշխատաշուկայում մշտապես մրցակցային դիրքերում են: Իսկ դրա համար անհրաժեշտություն է առաջանում արդյունավետ կառավարելու դոկտորական կրթական ծրագրերից և հետազոտական նախագծերից (ԿԾ) ակնկալվող վերջնարդյունքների ձևավորումը: Մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ ԳԱԱ ասպիրանտուրայում համապատասխան որակական փոփոխությունների արդյունքում թեկնածուական ատենախոսությունը ժամանակին պաշտպանած բնագետ ասպիրանտների ավելի քան 90 և այլ բնագավառների ավելի քան 75 տոկոսը միանգամից աշխատանքի են անցել հենց գիտական կազմակերպություններում՝ իրենց մասնագիտությամբ **[7]**:

ՀՀ ԳԱԱ-ում մեր ունեցած փորձը ցույց է տալիս, որ դոկտորանտուրայում կարևոր է ԿԾ-ի կառավարման նպատակադրումների որոշումը, որը պետք է տեղի ունենա երեք հարթությունում. առարկայական ծրագրերում, ուսումնառության կամ հետազոտությունների վերջնարդյունքներում, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջարկի շրջանակում: ԳԱԱ ասպիրանտուրայի կառավարման համակարգում արդեն ձևավորվում է նպատակադրումների աստիճանակարգ՝ «ներքևից վերև» սկզբունքով: Կառավարման հիմնական խնդիրը այս փուլում համարվում է «առարկայական ծրագրեր-կրթական համընդհանուր արդյունքներ» շղթայի ներդաշնակեցումն այնպես, որ սովորողի մեջ ձևավորվեն ոչ միայն գիտելիքներ, այլև հմտություններ և կարողություններ՝ միտված ուսումնառության վերջնարդյունքներին: Առավել ևս որ մենք խնդիր ենք դրել արագորեն լրացնել ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների կադրային բազան՝ ի հաշիվ դոկտորական կրթության շրջանավարտների:

ԳԱԱ-ում ԿԾ-ի կառավարման հաջորդ փուլը լինելու է դոկտորանտի մասնագիտական կարողությունների համակարգումը և առարկայական ծրագրերով դրանց ներկայացումն այնպես, որ այդ ամենը միտված լինի գլոբալ աշխատաշուկայի պահանջարկին **[8]**: Կարևորվելու է ԿԾ-ով նախատեսված վերջնարդյունքների բենչմարքինգը և համեմատական վերլուծությունը՝ կրթության շուկայում առկա միջազգային առաջավոր փորձի հետ: Կառավարման այս փուլում փորձ է արվելու վեր հանել ասպիրանտական կրթական ծրագրերի իրագործման ռեսուրսային սահմանափակումները և առաջարկություններ մշակել մրցունակ վերջնարդյունքների ձևավորմանը նպաստող հավելյալ ռեսուրսների ներգրավման հնարավորությունների ուղղությամբ:

Երրորդ մակարդակի բարձրագույն կրթությունն սկսողին ներկայումս անհրաժեշտ է դառնում հաղորդել այնպիսի հմտություններ և կարողություններ, որ երեք-չորս տարի անց շրջանավարտի համար դրանք «հնացած» չլինեն և չդառնան ոչ մրցունակ: Ուստի ԿԾ-ի կառավարման կարևորագույն փուլ է որակավորումների ազգային շրջանակով (ՈԱՇ) նախատեսված մասնագիտական կարողությունների և աշխատաշուկայում գործատուի դինամիկ փոփոխվող սպասումների համակցման արդյունավետ կառավարչական գործիքակազմի ստեղծումը **[9]**:

## Եզրակացություն

Այսպիսով՝ շրջանավարտի մասնագիտական կարողությունները ձևավորվում են կրթության ընթացքում, աստիճանաբար: Երրորդ մակարդակի ԿԾ-ի կառավարման անատոմիան առաջարկում ենք ներկայացնել «տակառի և դույլերի փոխլրացման» ձևով: Տակառը, որը պայմանականորեն կհամարվի շրջանավարտի մրցունակ կարողությունների համակցություն, դոկտորանտուրայում ուսումնառության տարիներին աստիճանաբար լցվում է դույլերով, որոնցից յուրաքանչյուրը ներկայանում է որպես մասնագիտական A, B, C, D կոնկրետ կարողություն (գծապատկեր 1): Իսկ յուրաքանչյուր դույլ, իր հերթին «լցվում է» առարկայական ծրագրերից բխող մասնագիտական գիտելիքներով, հմտություններով և կարողություններով: ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրայի ԿԾ կառավարման մեր փորձը ցույց է տալիս, որ դրա արդյունավետությունը մեծապես կախված է ողջ գործընթացի մշտադիտարկումից: Կարևորվում է, թե ինչպես և ինչ հաճախականությամբ է գնահատվում առարկայական ծրագրերով նախատեսված ուսումնառության վերջնարդյունքների փաստացի ձեռքբերումը:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Carroll J.B., Human cognitive abilities: A survey of factor-analytic studies. New York: Cambridge University Press. 1993. 819p
2. Царев Р.Ю., Тынченко С.В., Гриценко С.Н. Адаптивное обучение с использованием ресурсов информационно-образовательной среды. Современные проблемы науки и образования. № 5. 2016. Педагогические науки (13.00.00) С. 81-88
3. Хлызова Н.Ю. Интерпретация понятий «компетентность» и «компетенция»: к проблеме систематизации научной терминологии; Медиаобразование: от теории к практике: Сб. науч. статей. Томск: ТИИТ, 2008. С. 34-41
4. Խաչատրյան Ն., Ճուղության Ա. Ունակությունների հենքով համալսարանական կրթության ապագան: Այլընտրանք գիտական հանդես, ապրիլ-հունիս, 2020, էջ144-153
5. Ճուղության Ա., Մխիթարյան Ա., Ավետիսյան Ա. Մասնագիտական կրթության կառավարման հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն: 2024: 122 էջ
6. Մխիթարյան Ա., Խաչատրյան Ն. Կրթության արդյունավետ ռազմավարությունը դոկտորանտուրայում: Բանբեր հայագիտության: 2019: N1: էջ 198-208
7. Մխիթարյան Ա., Բեգոյան Կ. Դոկտորանտուրայի կառավարման գործընթացի զարգացումները ՀՀ ԳԱԱ-ում: ԿԱՃԱՌ գիտական պարբերական: 2022: N1: էջ 139-153
8. Մխիթարյան Ա., Խաչատրյան Ն., Խալաֆյան Ն. Դոկտորանտուրայի կառավարումը գիտության շուկայում: ԿԱՃԱՌ գիտական պարբերական: 2020: N1: էջ 65-82
9. ՀՀ կառավարության «ՀՀ որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին» 2011 թվականի մարտի 31-ին N 332-Ն որոշում